

Իսկ ես եղկելիս վրիպեալ եւ գատեալ ի նմանէ՝ մնացի այլ եւս երկու ամիս անդ, առ ի չըջել ի վանորայս եւ ուխտատեղս՝ լնլով զփափազ սրտիս եւ կատարելով զիղձս հոգոյ իմոյ :

9. ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ի ՄՈՒՇ

ՀԱՆԳԷՍՔ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ Ի ՎԵՆԵՏԻԿ

Եւ իբրեւ լցաւ Թ. ամիս, գտեալ ընկերք եւ նաւակ մի պատրաստական՝ յիշելով զանունն Աստուծոյ, կոչելով յօգնութիւն սուրբ զառաքեալսն Պետրոս եւ զՊօղոս մտեալ ի ներս՝ հասաք ի մեծն Վանատիք, օրն Համբարձման, որ կոչենց էնց ա<sup>1</sup>. զի օրն այն մեծ է անդ եւ յոլով տօնանմայ եւ շատիւ առնեն, որպէս ի Մսրբ սուվ քէսումին. զի Սպանիոս մօյտանի նման զարդարեն զամէն իտղոցնին. եւ Սա Մարքոյին առջեւի մօյտան սաֆի կանաչ ծառ ու ճուղ եւ տերեւոց զանազան յօրինուած եւ շէնք եւ վերեւն խումաչնի, չուխայք եւ աթլասք :

11 ճուխ եւ տէրեւոց : — 12 օրինուած : վէրեն :

զրէր նոյն Քահանայապետը նոյն թուականով. «Մեր մեծարոյ եղբոր Մելքիսեղեկի՝ Հոյոց մեծաց Պատրիարքին մեզի զսկած պատուիրակը՝ սիրելի որդին մեր Չաքարիս վարդապետ, տեղեկացուց մեզ, որ անցեալ տարի (1612), երբ Հոռմէն կը վերադառնար ի Հայաստան, Կ. Պոլիս հասնելով, եպիսկոպոսներէն, քահանաներէն ու իւր ազգին ժողովրդենէն եկեղեցւոյ առաջնորդ կարգուած է» . անդ, էջ 551: Կը տեսնուի ասկէ, թէ Սիմէոն Լեհացւոյ տողերը ունին հաւատարմութիւն :

<sup>1</sup> Ascensione, 1612, Մայիս 31: